Քսինտիան այցելել է Ֆրանսիա

Մարտը գժություն չի անի

Ինչու՞ են երեխաները նմանակում ծնողներին

ISSN 1829-149X
09007
9 771829 149003

ով իրազեկված է, նա զգաստացված է

արտակարգ թերթ

N 7 (328) 5.3.2010 - 11.3.2010 www.emergency.am

Շնորհավոր Մարտի 8

Արշիլ Գորկի, «Մայր»

Բնական ու տեխնածին աղետների այս երկրում, որտեղ ամեն քար ու թփի տակ, ամեն սար ու ձորի ծերպերին վտանգ է թաքնվածե չկա ավելի հզոր պաշտպանական համակարգ, քան հայ կինը, մայրը, քույրը: Ասենք՝ բոլոր ազգերին էլ պահողը կինն է, բայց մերն՝ առավել:

Եվ որքան էլ միջազգային լինի այս գիժ ամսվա ութերորդ, թվում է, թե սովորական գարնանային օրը, միեւնույն է, սա մեր օրն է, մեկն այն 366-ից, որում հայ կինը հերթական անգամ պետք է մեծարվի, գուցե ամենօրյա մեծարանքից քիչ ավելի: Ու բնավ էլ կապ չունի, թե դրսում ինչ եղանակ է՝ գարուն, թե աշուն… Հայ կնոջ կողքին միշտ էլ գարուն է, ծաղկաշատ ու երանավետ, ապահով ու անվտանգ գարուն:

Մեր թանկագին սիրասուն մայրեր, փափկասուն կանայք, նազելի աղջիկներ, «Արտակարգ թերթը» շնորհավորում է ձեր գարնանային տոնը, ցանկանում ձեզ արտակարգ առողջություն, անխաթար երջանկություն, անսահման սեր ու լիակատար ինքնահիրացում:

«Արտակարգ ալիք» հեռուստահաղորդում

☛ Ամենադժվար պահին նրանք միշտ ձեր կողքին են. Հայաստանի փրկարար ծառայության առօրյայից:



☛ Քաղպաշտպանության համաշխարհային օրվա՝ այս տարվա թեման «Աղետների բժշկությունն» է:

☛ Քաղպաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ Երեւանում եւ մարզերում:

☛ Առաջին օգնության հանրագիտարան՝ վիրակապեր:

Այս եւ այլ ուշագրավ թեմաների մասին՝ ուրբաթ, մարտի 5-ին, 23:10-ին՝ Շանթի եթերում: Կրկնությունը՝ շաբաթ, 9:10-ին եւ կիրակի, 12:20-ին:

Գարնանամուտ եւ քաղպաշտպանություն

Մարտի 1-ը Հայաստանի Հանրապետությունում սկսվեց կրկնակի շնորհավորանքով. մեկը՝ գարնան առաջին, իսկ մյուսը՝ քաղպաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ: 1994 թվականից Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց Քաղպաշտպանության միջազգային կազմակերպությանը (ՔՊՄԿ): Այս տարվա կարգախոսն է՝ «Աղետների բժշկությունը»:

Մարտի 1-ին ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության կողմից միայն Երեւան քաղաքում անցկացվեց 115, իսկ մարզերում՝ 102 միջոցառում: Ընտրված թեմաները բազմազան էին՝ սկսած արտակարգ իրավիճակի դեպքում վարվեցողության կանոններից, մինչեւ քիմիական վտանգավոր նյութերի արտանետման դեպքում աշակերտների պաշտպանության կազմակերպումը: Չէին անտեսվել նաեւ հակառակորդի հանկարծակի հարձակման ժամանակ բժշկական օգնության կազմակերպմանը, ինչպես նաեւ կենսաբանական զենքի գործադրման միջոցներին, ձեւերին եւ դրանից պաշտպանվելու մեթոդներին վերաբերող թեմաները: Առաջին պլանում էին քաղպաշտպանության գծով պատասխանատուները, որոնք պատմում էին, թե ինչ է քաղպաշտպանությունը, ինչ գիտելիքներ է անհրաժեշտ ունենալ, ինչպիսի վարքագիծ պետք է ցուցաբերել աղետների ժամանակ եւ այլն:

Քաղպաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ միջոցառում էր նաեւ մայրաքաղաքի Ստեփան Զորյանի անվան թիվ 56 դպրոցում: Առաջին դասաժամին, դպրոցի զինղեկն աշակերտներին պատմել էր օրվա կարեւորության մասին ու պատասխանել նրանց հարցերին: Երեխաները դպրոցի տարհանման պլանին ծանոթ էին անցյալ տարիներին կազմակերպված միջոցառումներից ու գիտեին, թե ո՞ր հարկից, ո՞ր ուղղությամբ պետք է դուրս գան:

>>> 5

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առեւտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

քրոնիկոն

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Անգիտակից վիճակում

Փետրվարի 26-ին, ժամը 11.40-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Դեմիրճյան 19/4 հասցեի բնակիչը չի արձագանքում հեռախոսի ու դռան զանգերին, եւ դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած փրկարարները բացել են նշված բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է 1936 թ. ծնված Մառլենա Հովսեփյանը՝ անգիտակից վիճակում:

Փրկարարների կողմից տուժածին ցույց է տրվել առաջին բուժօգնություն:

Բոտուլիզմ

Փետրվարի 26-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 18.00-ին սննդային թունավորում (բոտուլիզմ) ախտորոշմամբ Գյումրիի ինֆեկցիոն հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի Շահինյան 6ա/55 հասցեի բնակիչ, 1982 թ. ծնված Պողոս Գրիգորյանը: Նախնական տվյալներով՝ թունավորման պատճառ է հանդիսացել պահածոյացված պոմիդորը:

Բժիշկների կողմից տուժածի վիճակը գնահատվել է ծանր:

Հայտնաբերվել է դիակ

Փետրվարի 27-ին, ժամը 13.15-ին Սեւան քաղաքի ոստիկանության բաժնից ահազանգ է ստացվել, որ նույն քաղաքի Սայաթ-Նովա 22/17 հասցեում հնարավոր է դիակի առկայություն, եւ դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Փրկարարների ուժերով բացվել է բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է տանտիրուհու՝ 1950 թ. ծնված Ա. Գեւորգյանի դին:

***

Փետրվարի 28-ին, ժամը 13.05-ին ահազանգ է ստացվել, որ Գավառ քաղաքի Կաբելագործների 44/37 հասցեի բնակիչը չի արձագանքում հեռախոսի ու դռան զանգերին, եւ դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Փրկարարների կողմից բացվել է բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է 1936 թ. ծնված Ռազմիկ Սիրականյանի դին:

Փլուզում

Մարտի 1-ին, ժամը 11.30-ին Գյումրի քաղաքի Ռուսթավելու 29 հասցեից ահազանգ է ստացվել, որ տեղի է ունեցել տան ծածկի փլուզում:

Դեպքի վայր է մեկնել Շիրակի մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:

Տեղում պարզվել է, որ նշված հասցեում տեղակայված տունը կառուցվել է 1881 թ., ունի վթարայնության 4-րդ աստիճան, մուտքի հիմնական պատերի վերին շարվածքը խարխլված է, նախկինում փլուզվել է հողային ծածկի մի մասը, իսկ գիշերվա ընթացքում՝ նաեւ մյուս հատվածը:

Փրկարարների կողմից տան բնակիչների հետ տարվել են բացատրական աշխատանքներ անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ:

Դեպքի մասին տեղյակ է պահվել Գյումրիի քաղաքապետարանը:

Զոհեր՝ մեքենաների բախումից

Փետրվարի 28-ին, ժամը 18.20-ին Մեղրի քաղաքի ճանապարհային ոստիկանությունից տեղեկություն է ստացվել, որ Ագարակ-Երեւան ավտոճանապարհի 2-րդ կմ-ում տեղի է ունեցել ավտոպատահար, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ իրար են բախվել են «Օպել-Վեկտրա» մակնիշի 08 UL 569 եւ «ՎԱԶ-21011» մակնիշի 08 OL 643 պետհամարանիշերի ավտոմեքենաները:

Պատահարի հետեւանքով մեքենաների վարորդներ՝ 1987 թ. ծնված Ն. Հակոբյանը եւ 1985 թ. ծնված Մ. Հայրապետյանը, տեղում զոհվել են, իսկ «Օպել-Վեկտրա» մակնիշի ավտոմեքենայի ուղեւոր, 1983 թ. ծնված Հ. Ավագյանը եւ «ՎԱԶ-21011» մակնիշի ավտոմեքենայի ուղեւորներ՝ 1985 թ. ծնված Ա. Ծատրյանը, 1984 թ. ծնված Է. Բաղալյանը եւ 1988 թ. ծնված Ա. Միրզոյանը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ:

Փրկարարների օգնությամբ տուժածները դուրս են բերվել ավտոմեքենաներից եւ տեղափոխվել Ագարակի հիվանդանոց:

Բժիշկները տուժածների վիճակը գնահատել են բավարար:

Մեքենան հարվածել է գազատարին

Մարտի 1-ին, ժամը 17.33-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Դրոյի փողոցի թիվ 40 շենքի մոտակայքում ավտոմեքենան հարվածել է գազատար խողովակին, եւ հնարավոր է հրդեհի բռնկում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ Ա. Թադեւոսյանին պատկանող «ԲՄՎ-316» մակնիշի 05 OU 358 պետհամարանիշի ավտոմեքենան բախվել է գազատար խողովակին, ինչի հետեւանքով առաջացել է գազի արտահոսք: Դեպքի վայր մեկնած «1-04» ծառայության աշխատակիցները վերացրել են գազի արտահոսքը, իսկ հրշեջ-փրկարարների կողմից իրականացվել են խողովակի հովացման աշխատանքներ:

Զոհեր եւ վիրավորներ չկան:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 27 դեպք:

Այրվել է անասնակեր

Փետրվարի 25-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 19.19-ին հրդեհ է բռնկվել Վանաձորի Սանկտ Պետերբուրգի փողոցի 211-րդ տան բակում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 19.38-ին, մարվել՝ 20.25-ին:

Այրվել է Ա. Ասլանյանին պատկանող տան բակում պահեստավորված 1000 քմ մակերեսով անասնակերը եւ ոչ բնակելի տնակի հատակը՝ 1 քմ մակերեսով:

Գոհար Բաղդասարյան

միջազգային լուրեր

Քսինտիան այցելել է Ֆրանսիա

Փետրվարի 28-ին Արեւմտյան Եվրոպայում բարձրացած հուժկու փոթորկին զոհ է գնացել 52 մարդ, մոտ 60-ը տարբեր աստիճանի վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: Քսինտիա անունը կրող փոթորկի զոհ է դարձել 45 ֆրանսիացի, նրանց մեծ մասը զոհվել է մերձծովյան շրջաններում: Ավելի քան մեկ միլիոն մարդ մնացել է առանց էլեկտրաէներգիայի: Տասնյակ մարդիկ համարվում են անհետ կորած:

Փոթորիկը սկիզբ է առել Իսպանիայի եւ Ֆրանսիայի ափամերձ շրջաններից եւ շարժվել Գերմանիայի, Բելգիայի եւ Նիդեռլանդների ուղղությամբ: Ֆրանսիացի մասնագետները Քսինտիան բնութագրել են որպես վերջին տասնամյակի ամենաուժեղ փոթորիկը: Քամու արագությունը հասել է 150 կմ/ժ-ի:

Ֆրանսիայի կառավարությունն արդեն որոշում է կայացրել մեկ միլիոն եվրո գումար հատկացնել տուժած շրջաններին՝ աջակցություն ցուցաբերելու համար: Տուժած շրջաններ է այցելել երկրի նախագահ Նիկոլա Սարկոզին:

Ձմեռը դեռ շարունակվում է

Մեծ Բրիտանիան շարունակում է ծածկված մնալ ձնով: Առատ տեղումների հետեւանքով Շոտլանդիայում մեկ օրվա ընթացքում ձյան շերտի հաստությունը հասել է մոտ մեկ մետրի, որը ռեկորդային ցուցանիշ է այս շրջանի համար: Վատ եղանակի պատճառով հոսանքազրկվել է մոտ 50 հազար տուն:

Ուժեղ տեղումները կաթվածահար են արել ԱՄՆ-ի ամբողջ հյուսիսարեւելյան հատվածը: Նյու Յորքում տեղացած ձյան շերտը կես մետր է կազմել: Քաղաքի կենտրոնական զբոսայգում ձյան ծածկի հաստությունը հասել է 55 սմ-ի, իսկ որոշ թաղամասերում՝ 65 սմ-ի: Նյու Յորքի դպրոցներում հետաձգվել են դասերը, փակվել է ՄԱԿ-ի գրասենյակը, հասարակական տրանսպորտն անկանոն է աշխատում: ԱՄՆ հյուսիսարեւելյան նահանգների մի շարք խոշոր քաղաքների օդանավակայաններում հետաձգվել են հազարավոր ավիաթռիչքներ: Այս ձմեռ Նյու Յորքում վերջին տասնամյակի կտրվածքով ամենաուժեղ տեղումներն են գրանցվել: Եղանակային վատ պայմաններն առնվազն երեք մարդու մահվան պատճառ են դարձել, հազարավոր սպառողներ մնացել են առանց էլեկտրաէներգիայի:

Հրավառություն՝ տխուր վերջաբանով

Փետրվարի 26-ի երեկոյան Չինաստանի ուանդուն շրջանում հրավառության հետեւանքով զոհվել է 19 մարդ, ավելի քան 30-ը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ: Ըստ տեղական լրատվամիջոցների՝ դեպքը տեղի է ունեցել Գուանդուն շրջանի Պունին քաղաքում: Տեղի բնակիչների վկայությամբ՝ հրավառության նյութերը պայթել են բնակիչներից մեկի տան բակում:

Հրավառություն իրականացնող երկու մեղավորները ձերբակալվել են:

Բռնկված կրակն անմիջապես տարածվել է հարեւան շինությունների ուղղությամբ: Ոստիկանության տվյալներով՝ ողբերգության պատճառը պայթունավտանգ նյութերի հետ անզգույշ վարվելն է եղել: Պայթյունը ոչնչացրել է առնվազն 4 բնակելի տուն:

Ինքնաթիռն ընկել է բնակելի տների վրա

Մարտի 3-ին Հնդկաստանի Հայդարաբադ քաղաքում ավիաշոուի բացման ժամանակ անհայտ պատճառներով կործանվել է երկրի ռազմածովային ուժերի ինքնաթիռը:

Բարձրագույն պիլոտաժի ցուցադրության ժամանակ ինքնաթիռը դարձել է անկառավարելի եւ ընկել բնակելի թաղամասի վրա: Երկու օդաչուները զոհվել են: Միջադեպի զոհ է դարձել նաեւ մեկ բնակիչ, եւս չորսը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ:

Ականատեսների վկայությամբ՝ ինքնաթիռը նախ բախվել է շենքերից մեկի տանիքին գտնվող բջջային կապի աշտարակին, այնուհետեւ՝ ընկել բնակելի տների վրա: Ինքնաթիռը կործանվել է շոուի բացումից 15 րոպե անց:

Միջադեպի կապակցությամբ ավիաշոուի աշխատանքները չեն դադարեցվել:

Պայթյուն Վրաստանի հանքահորում

Մարտի 3-ի գիշերը Արեւմտյան Վրաստանում գտնվող Տկիբուլյան հանքահորում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհվել է չորս հանքափոր, եւս մի քանիսը ստացել են վնասվածքներ: Միջադեպը տեղի է ունեցել «Վրացքարածուխ» ընկերությանը պատկանող հանքահորում:

Նախնական տվյալներով՝ պայթյունի պատճառը մեթանի արտահոսքն է եղել:

Հրդեհ հոգեբուժարանում

Մարտի 3-ին հրդեհ է բռնկվել Լեհաստանի Լյուբլինեց քաղաքի հոգեբուժարանում: Կան զոհեր եւ տուժածներ:

Հրդեհի հետեւանքով զոհվել է հոգեբուժարանի երեք հիվանդ, եւս վեցը ստացել են տարբեր աստիճանի այրվածքներ:

Նախնական տվյալներով՝ շենքի առաջին հարկի հիվանդասենյակներից մեկում ներքնակ է այրվել, որից հետո հրդեհը տարածվել է ամբողջ շենքով: Հոգեբուժարանից տարահանվել է 20 մարդ:

Ֆաինա Թյունիբաբյան

Հաղորդում է ԼՂՀ Փրկարար ծառայությունը

Դժբախտ պատահար

Փետրվարի 28-ին, առավոտյան ժամը 9:00-ի սահմաններում, Շուշի քաղաքի բնակիչ Հ.Ե. Աղաջանյանը (1978 թ.) ալեհավաքն ուղղելու նպատակով բարձրացել է հինգահարկանի շենքի տանիքը, վայր ընկել եւ տեղում մահացել:

ՃՏՊ

Մարտի 1-ին Ստեփանակերտի Տիգրան Մեծի փողոցում իրար են բախվել «ՋԻՊ Պաջերո» եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենաները: Բախման արդյունքում տարբեր աստիճանի վնասվածներ են ստացել Ա.Վ.Սարգիսովը (ԼՂՀ Մարտունու շրջանի Ճարտար գյուղի բնակիչ, ծնվ. 1985 թ.) եւ Հ.Է.Հայրապետյանը (Ստեփանակերտի բնակիչ, ծնվ. 1996 թ.): Տուժածները տեղափոխվել են համապատասխանաբար՝ ԼՂՀ հանրապետական հիվանդանոց եւ «Արեւիկ» մանկաբուժական հիվանդանոց: Ըստ բժշկների, տուժածների վիճակը գնահատվում է բավարար:

Հրդեհ

Մարտի 3-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Աբովյան փ.35 հասցեում: Դեպքի վայր է ժամանել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհի արդյունքում այրվել է 700 մ/ք չոր խոտածածկ:

Կենցաղային կանչեր

Նշված ժամանակահատվածում ԼՂՀ ՓԾ օպերատիվ հերթապահ մասում գրանցվել է 5 ահազանգ, բոլորն էլ մուտքի դռների փակման հետ կապված: Նշված բոլոր դեպքերում փրկարարների կողմից ցուցաբերվել է անհրաժեշտ օգնություն:

Երկրագունդը շարունակում է ցնցվել

Երկրաշարժի պարամետրերը եւ նախնական հետեւանքները

Փետրվարի 27-ին, շաբաթ առավոտյան, Չիլիում տեղի է ունեցել ավերիչ երկրաշարժ, որի ուժը (մագնիտուդը) եղել է 8,8՝ ըստ Ռիխտերի սանդղակի, իսկ ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 11 բալ: Էպիկենտրոնը, որը գտնվում էր օվկիանոսում՝

ափից 5 կմ հեռու, երկրի մայրաքաղաք Սանտյագոյից գտնվում էր 325 կմ, Կոնսեպսիոն քաղաքից՝ 115 կմ, Չիլլան քաղաքից՝ 100 կմ հեռավորության վրա: Մարտի 4-ի դրությամբ երկրաշարժը խլել է 800 մարդու կյանք: Այս թիվն աճում է, քանի որ կան մեծ թվով անհայտ կորածներ: Ավերվել է երկրի մոտ 80%-ը: Երկրաշարժի հետեւանքով զոհվածների թիվն ամենամեծն է Մաուլե (541) եւ Բիո Բիո շրջաններում (64): Աղետից տուժածների ընդհանուր թիվը գերազանցում է 2 միլիոնը: Գլխավոր ցնցումին հետեւել են տարբեր ուժի ավելի քան 100 հետցնցումներ, ընդ որում 6,0 եւ ավելի մագնիտուդով՝ 12 հետցնցում:

Վերջին անգամ Չիլիում ավերիչ երկրաշարժ եղել է 1960թ. մայիսի 22-ին: Այն ունեցել է 8,5 մագնիտուդ, խլել է 5000 մարդու կյանք՝ առաջացնելով համատարած ավերածություններ, ցունամի եւ հրաբխային ակտիվություն:

Հետեւանքների վերացմանն ուղղված քայլերը

Երկրաշարժի հետեւանքների վերացման նպատակով հրավիրված խորհրդակցության ժամանակ երկրի նախագահ Միշել Բաչելետը հայտարարել է արտակարգ դրություն Մաուլե եւ Բիո Բիո շրջաններում: Զինվորականներին հանձնարարված է կանխել դիակապության դեպքերը՝ հատկապես Կոնսեպսիոն քաղաքում: Նշված շրջաններում Չիլիի իշխանությունները հայտարարել են պարետային ժամ՝ 21.00-ից մինչեւ 6.00-ը:

Նախագահ Բաչելետը կոչ է արել ժողովրդին ցուցաբերել դիմացկունություն եւ ցավակցել է երկրաշարժից տուժածներին: Նա խնդրել է ակտիվ մասնակցություն ունենալ երկրի վերականգնման աշխատանքներին: Բաչելետը հաստատել է, որ օդային հաղորդակցությունը շտապ վերականգնվում է, եւ որ օտարերկրյա պետություններին օգնության խնդրանքով դիմելուց առաջ պետք է կազմել առաջին անհրաժեշտության պարագաների ցանկը: Ամեն դեպքում, անհրաժեշտ են դաշտային հոսպիտալներ, բժշկական սարքավորումներ եւ նյութեր, հեռահաղորդակցության միջոցներ, էլեկտրաէներգիայի ստացման ագրեգատներ, ջրի մաքրման սարքեր: Բացի այդ, Չիլի են ժամանելու մասնագետ փրկարարներ: Վերականգնման աշխատանքների իրականացումը գլխավորում են ներքին գործերի եւ պաշտպանության նախարարները: Չիլին կընդունի նաեւ ֆինանսական օգնություն, որի համար բանկում բացվել է հատուկ հաշիվ:

Չիլիի երկրաշարժը եւ ՀՀ փարածքի սեյսմիկ ռեժիմը

Իհարկե, Չիլիի՝ փետրվարի 27-ի հզոր երկրաշարժը կունենա իր ազդեցությունը երկրագնդի սեյսմիկ իրավիճակի վրա: Ինչ վերաբերում է այդ երկրաշարժի ազդեցությանը մեր հանրապետության սեյսմիկ ռեժիմի վրա, ապա այն կլինի աննշան: Բանն այն է, որ Չիլիի տարածքը գտնվում է Նասկայի եւ Հարավամերիկյան տեկտոնական սալերի, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքը՝ Արաբական եւ Եվրասիական տեկտոնական սալերի բախման գոտում: Հեռավորությունն էլ մեր երկրների միջեւ մոտ 10 000 կմ է: Օրինաչափ է, որ ինչքան խորն է երկրաշարժի հիպոկենտրոնը, այնքան ավելի մեծ է նրա ազդեցության տարածքը եւ ավելի թույլ է այդ ազդեցությունը: Համեմատելով, միմիայն սեյսմոլոգիական տեսանկյունից, Չիլիի փետրվարի 27-ի (M=8,8, զոհերի քանակը՝ 800) եւ Սպիտակի 1988թ. (M=7,0, զոհերի քանակը՝ 25000) ավերիչ երկրաշարժերը, տեսնում ենք անհամաչափություն այդ երկրաշարժերի ուժի եւ դրանց հետեւանքով զոհվածների քանակի միջեւ: Հավանաբար, այդ անհամաչափությունը սեյսմոլոգիական տեսանկյունից կարելի է բացատրել հիպոկենտրոնների տարբեր խորություններով:

Հ.Պետրոսյան, Մ.Ենանով
ՍՊԱԾ աշխատակիցներ

Ս. թ. փետրվարի 25-ից մարտի 4-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի եւ նրան հարակից տարածքներում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են երկու երկրաշարժ: Մարտի 2-ին Իրան-Թուրքիա-Հայաստան սահմանային գոտում՝ Իրանի Մակու քաղաքից 34 կմ դեպի հյուսիս-արեւելք, տեղի է ունեցել 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Նույն օրը 3 բալանոց սեյսմիկ ցնցում է գրանցվել Հայաստանի Գառնի գյուղից 10 կմ դեպի հարավ-արեւմուտք, որին նույն օրը հաջորդել է 2 բալանոց երեք հետցնցում:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել ութ երկրաշարժ: Փետրվարի 26-ին Վրաստանի Թելավի քաղաքից 33 կմ դեպի հյուսիս-արեւմուտք գրանցվել է 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Նույն օրը Իրանի Սալմաս քաղաքից 30 կմ դեպի հյուսիս-արեւելք տեղի է ունեցել 3 բալանոց սեյսմիկ ցնցում: Հաջորդ երկրաշարժը՝ 3-4 բալ ուժգնությամբ, գրանցվել է փետրվարի 27-ին Թուրքիա-Իրան սահմանային գոտում՝ Դողուբայազետ (Թուրքիա) քաղաքից 40 կմ դեպի հյուսիս-արեւելք: Հաջորդ օրը Թուրքիայում 3 երկրաշարժ է տեղի ունեցել՝ Չալդրան քաղաքից 37 կմ դեպի հարավ-արեւմուտք, Կարս քաղաքից 50 կմ եւ 38 կմ դեպի արեւմուտք, համապատասխանաբար՝ 3 բալ, 4 բալ եւ 3 բալ ուժգնությամբ: Մարտի 1-ին Վրաստան-Ադրբեջան-Ռուսաստան սահմանային գոտում՝ վրացական Քվարելի քաղաքից 28 կմ դեպի հարավ-արեւելք, եւ Վրաստանում՝ Դմանիսի քաղաքից 20 կմ դեպի հարավ-արեւմուտք, գրանցվել են 3 բալ ուժգնությամբ թույլ երկրաշարժեր:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է 15 ուժեղ երկրաշարժ, որոնք տեղի են ունեցել խաղաղօվկիանոսյան օղակաձեւ հրե գոտում: Փետրվարի 26-ին 7.0 մագնիտուդով ուժեղ սեյսմիկ իրադարձություն է տեղի ունեցել Ճապոնիայի հարավային ափամերձ գոտում, որը բերել է ջրամատակարարման համակարգի ժամանակավոր խափանման: Հաջորդ օրն ավերիչ երկրաշարժ է գրանցվել Չիլիի ափամերձ գոտում, Կոկենես քաղաքից 42 կմ դեպի արեւմուտք, որն ունեցել է 8.8 մագնիտուդ: Մինչ օրս երկրաշարժին հետեւել է միջին ուժգնությամբ ավելին քան 100 հետցնցում, իսկ 6.0 եւ ավելի մագնիտուդով՝ 12 հետցնցում: Ըստ նախնական տվյալների՝ երկրաշարժերի եւ նրանց հարուցած ցունամիի հետեւանքով զոհվել է 800 մարդ, կան տուժածներ եւ ավերածություններ: Մարտի 4-ին 6.3 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ է գրանցվել Թայվանի Յունգկանգ քաղաքից 30 կմ դեպի արեւմուտք, որի հետեւանքով վիրավորվել է 11 մարդ, մասնակիորեն վնասվել են շենքեր եւ շինություններ:

ՍՊԱԾ գործակալություն

Փետրվարի 18-24-ը դիտված հիդրոօդերեւութաբանական պայմանները ՀՀ-ում

Հանրապետությունում փետրվարի 28-ի գիշերը շրջանների մեծ մասում դիտվել են թույլ տեղումներ՝ մինչեւ 2-6 մմ քանակությամբ: Մնացած օրերին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքի հովիտներում՝ +17... +20 ºC, Արարատյան դաշտում՝ +15... +17 ºC, Տավուշում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +10... +15 ºC, լեռնային շրջաններում, Արցախում՝ +7... +10 ºC:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -4... -8 ºC, Լոռիում, Տավուշում, Սյունիքի նախալեռներում՝ -2... -7 ºC, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում, Արցախում՝ -1... +3 ºC:

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Մարտի 5-ին՝ երեկոյան ժամերին, 6 եւ 9-ին՝ առանձին շրջաններում սպասվում են թույլ տեղումներ: 5-ի գիշերը սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին՝ հարավարեւմտյան՝ 3-8 մ/վրկ արագությամբ: Օդի ջերմաստիճանը 5-ի գիշերը կնվազի 3-5 ºC, ցերեկը նույնքան կբարձրանա, 6-9-ը կբարձրանա ընդհանուր առմամբ եւս 4-6 ºC:

Մարտի 5-ին նվազագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում կտատանվի -1... +3 ºC, Սյունիքի հովիտներում՝ 0... +4 ºC, Տավուշում, Սյունիքի նախալեռներում՝ 0... -5 ºC, Լոռիում՝ -1... -6 ºC, լեռնային շրջաններում՝ -4... -9 ºC սահմաններում:

Առավելագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում կտատանվի +10... +15 ºC, Սյունիքի հովիտներում՝ +11... +16 ºC, Սյունիքի նախալեռներում՝ +8... +12 ºC, Տավուշում՝ +10... +14 ºC, Լոռիում՝ +9... +13 ºC, լեռնային շրջաններում՝ +2... +7 ºC սահմաններում:

Երեւանում մարտի 5-ի գիշերը սպասվում է առանց տեղումների եղանակ: 5-ի երեկոյան ժամերին, 7-ին հնարավոր է թույլ անձրեւ: Մարտի 6-ին, 8-ին, 9-ին էական տեղումներ չեն սպասվում: Օդի ջերմաստիճանը 5-ի գիշերը կտատանվի 0... +2 ºC, ցերեկը +12... +14 ºC սահմաններում:

Ուղերձ Հանսին-Ավաձիից

Այսօր արդեն շատերը գիտեն, որ Ճապոնիան սեյսմավտանգ գոտում է, եւ այստեղ հաճախ են ավերիչ երկրաշարժեր լինում: Ճապոնացիները, սակայն, սովորել են հաշտ ապրել տարերքի հետ: Աշխարհին տեխնոլոգիական հրաշքներով զարմացնող այս երկիրը եւս մի ուսանելի ոլորտ է բացահայտել՝ սեյսմակայուն շինարարություն:

Այս տարվա՝ Հայիթիի եւ Չիլիի կործանարար երկրաշարժերը եւս մի հիշեցում են, որ անփութությունը շինարարության ոլորտում պատժելի է: Մենք կարող ենք դա հաստատել, մենք դրա ականատեսն ենք եղել 88-ին՝ Սպիտակում: Իսկ որ իրազեկվածությունը եւս կարող է կյանքեր փրկել, նույնպես յուրացրել ենք:

Այս համարից՝ Ձեզ կներկայացնենք ճապոնական Հանսին-Ավաձի քաղաքի 2005 թ. հունվարին տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից քաղված դասերի ժողովածուն, որ մեզ են տրամադրել մեր ճապոնացի գործընկերները: Մասնագետների կողմից՝ այդ երկրաշարժի հետեւանքների ու հետագա իրադարձությունների մանրակրկիտ հետազոտման ու մշակման արդյունքում ստեղծված այս ձեռնարկը, կարծում ենք, օգտակար կլինի բոլորի համար:

1995 թվականի հունվարի 17-ին Հանսին-Ավաձիում տեղի ունեցած երկրաշարժից մեծ կորուստներ կրեց Հյոգո նահանգի հարավային հատվածը: Զոհվածների թիվը մոտ 6400 էր, իսկ վնասի ընդհանուր գումարը՝ 1 տրիլիոն իեն: 2005 թվականի հունվարին Կոբեում Աղետների հետեւանքների նվազեցման համաշարհային համաժողով հրավիրվեց, որտեղ ընդգծվեց զարգացող երկների՝ միջազգային համագործակցության միջոցով աղետներին դիմակայելու հնարավորությունների շատ գլոբալ հզորացման կարեւորությունը:

Այդ կապակցությամբ Աղետների նվազեցման ուսուցման միջազգային կենտրոնը եւ «Խիտո տ բոսայի միության»-ն («Մարդկության առաջան ու անվտանգության միջոցառումները»), գործնականում կիրառելով Հանսին-Ավաձիի երկրաշարժի փորձն ու խաղած դասերը, աշխարհում աղետների նվազեցման ոլորտում կադրերի պատրաստումը խթանելու նպատակով, որպես ուսումնական ձեռնարկ, հրատարակել են «Հանսին-Ավաձիի երկրաշարժից քաղած դասերի ժողովածուն»:

Այդ ժողովածուն կազմված է այն արժեքավոր դասերից, որոնք սերտել են Հանսին-Ավաձիի երկրաշարժից հետո՝ որպես ուղերձ ապագա սերունդներին եւ աշխարհի բոլոր մարդկանց: Մենք ցանկանում ենք, որ այն՝ որպես ուսումնական ձեռնարկ, լայնորեն կիրառվի տարբեր երկրներում՝ աղետների հասցրած վնասի նվազեցման եւ անվտանգության միջոցառումների մշակման համար:

Մորիկավա Հիդեո
Աղետների վտանգի նվազեցման ուսուցման միջազգային կենտրոնի տնօրեն

Սովորել

Միշտ եւ ամենուրեք սովորել աղետների եւ դրանց վտանգի նվազեցման մասին.

• Շատ կարեւոր է անվտանգության միջոցառումների վերաբերյալ դասընթացների եւ ուսուցման միջոցով իմանալ սեփական տարածաշրջանի տարերային աղետների մասին եւ փրկվելու համար ճիշտ տեղեկատվություն ունենալ:

Դասեր քաղել աղետներից եւ կապել դրանք աղետների վտանգի նվազեցման եւ կանխարգելման միջոցառումների հետ.

• Աղետները մշտապես կրկնվում են: Շատ կարեւոր է՝ հաջորդ սերնդին նախկին աղետներից քաղած դասերը փոխանցելիս կիրառել դրանք աղետների վտանգների նվազեցման տարբեր միջոցառումներում:

Պահպանել

Սեփական ուժերով ապահովել սեփական կյանքի ու քաղաքի պահպանությունը.

• Անվտանգության միջոցառումների գլխավոր գործոնը ինքնօգնությունն է: Երբ ինքնօգնությունն ու փոխօգնությունը բավարար չեն, գործում է հանրության օգնությունը, այդ պատճառով էլ պետք է կարգավորել ինքնօգնությունը, փոխօգնությունն ու հանրային օգնությունը:

Սեփական տների անվտանգությունն ապահովելու շնորհիվ պաշտպանել ընտանիքն ու հարեւաններին.

• Սեփական կյանքն ու ընտանիքը պաշտպանելու համար կարեւոր է տան սեյսմակայունության ապահովման միջոցառումներ ձեռնարկել: Սեփական տան անվտանգության պահպանումը կապված է շրջանի սեյսմակայունության բարձրացման հետ:

Տուժածների համար կարեւոր է «կացարանի ապահովումը» եւ «կապը» շրջապատի մարդկանց հետ.

• Կյանքի նորմալ ընթացքի վերականգնման համար տուժածին ամենից առաջ կացարանով ապահովում է պետք: Կարեւոր կետ է նաեւ շրջապատի մարդկանց հետ կապը:

Մտածել

Կարողանալ պատկերացնել աղետը.

• Չի կարելի մտածել, որ մեզ հետ ոչինչ չի պատահի, պետք է պարզել, թե ինչ վտանգներ կան այնտեղ, որտեղ ապրում ենք:

• Նաեւ կարեւոր է սովորական կյանքում աղետին պատրաստվելիս անել այն ամենը, ինչ կարող ենք:

Օգնել միմյանց

Շատ կարեւոր է օգնություն ցույց տալ տուժած շրջանի հասարակության պահանջներին ու կարիքներին համաձայն.

• Անհրաժեշտ է մտածել, թե տուժածներին իրականում ինչ է պետք, կարեւոր է, որ բարի նպատակներով ցուցաբերված օգնությունը տուժած շրջանի համար «2-րդ աղետ» չդառնա:

Ստեղծել

Ստեղծել սեփական քաղաքը սեփական ձեռքերով.

• Կարեւոր է, որ քաղաքի բնակչությունը մասնակցի դրա ստեղծմանը:

• Բացի դրանից, քաղաքի պլանավորումը մարդկանց ու շրջակա միջավայրի համար կհանգեցնի աղետների ժամանակ դրա կայունությանը:

Կարեւոր է հնարավորինս արագ միջոցներ ձեռնարկել տուժած շրջանի ինքնուրույնությունն ապահովելու համար.

• Ձեռնարկությունների ու խանութների արագ վերաբացումը նպաստում է տուժած շրջանում կյանքի նորմալ ընթացքի ապահովմանը:

• Նույն կերպ, աղետից հետո տնտեսական վերականգնմանն ուղղված ջանքերը նպաստում են դրա վերածննդին:

Շրջանում տարահանման վայրերը՝ օգնության կենտրոններ

• Աղետի առաջացման ժամանակ կարեւոր է դրա եւ կյանքի մասին տեղեկատվություն ունենալը:

• Տուժած շրջանում տարահանման կենտրոնները կենսականորեն անհրաժեշտ տեղեկատվության աղբյուր են հանդիսանում:

Շարունակելի

Ճապոնիայի խոշոր երկրաշարժերը

1923 թվական

Սեպտեմբերի 1-3-ը տեղի ունեցավ 8.3 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ՝ ըստ Ռիխտերի սանդղակի: Զոհվեց մոտ 200 հազար մարդ, այդ թվում Յոկոգամա եւ Տոկիո քաղաքներում՝ մոտ 143 հազար, վնասվածքներ ստացան մոտ 200 հազարը, անօթեւան մնացին մոտ 3.5 մլն-ը: Այդ օրվանից սեպտեմբերի 1-ին՝ «Կանտոյի մեծ երկրաշարժի օրը», ամբողջ Ճապոնիայում ուսումնավարժություններ են անցկացվում, որոնց նպատակն է բնակչությանը սովորեցնել երկրաշարժերի ժամանակ ճիշտ վարվելակերպի կանոնները:

1948 թվական

Հունիսի 28-ին Ֆուկուի նահանգում տեղի ունեցած (7.3 մագնիտուդ) երկրաշարժը մոտ 4 հազար մարդու կյանք խլեց:

1964 թվական

Հունիսի16-ին Հոնսյու կղզու Ակիտա, Նիիգատա եւ Յամագատա նահանգներում տեղի ունեցավ 7.5 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ՝ ըստ Ռիխտերի սանդղակի: Անօթեւան մնաց 500 հազարից ավելի մարդ:

1993 թվական

Հուլիսի 12-ին երկրաշարժ տեղի ունեցավ Օկուսիրի կղզու շրջանում (7.8 մագնիտուդ): Այն հզոր՝ մինչեւ 7մ բարձրությամբ ցունամի առաջացրեց, որը շարժվում էր մոտ 500 կմ/ժ արագությամբ: Զովեց 230 մարդ:

1995 թվական

Հունվարի 17-ին Հոնսյու կղզու հարավ-արեւմուտքում տեղի ունեցած՝ Ռիխտերի սանդղակով 7.5 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժի հետեւանքով զոհվեց 6 308 մարդ: Հատկապես տուժեցին Կոբե, Սումոտո, Կիոտո քաղաքները: Վնասի չափը կազմել է 130 մլրդ դոլար:

2000 թվական

Հոկտեմբերի 6-ին ճապոնիայի հյուսիսում տեղի ունեցավ Ռիխտերի սանդղակով 7.3 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ: Տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստացան 110

մարդ, մասամբ կամ հիմնովին ավերվեց 70 շենք, վնասված շենքերի թիվն անցավ 2 հազարը: Հիմնական հարվածը կրեց Տոտտորի նահանգը:

2003 թվական

Մայիսի 26-ին ճապոնական Հոնսյու կղզու հյուսիս-արեւելյան հատվածում Ռիխտերի սանդղակով 7 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժի հետեւանքով 143 մարդ վնասվածքներ ստացավ:

2003 թվական

Հուլիսի 25-ին ուժեղ երկրաշարժ տեղի ունեցավ Ճապոնիայի հյուսիս-արեւելքում, որի հետեւանքով առնվազն 50 մարդ տարբեր աստիճանի վնասվածքներ ստացավ: Երկրաշարժի էպիկենտրոնը, որի ուժգնությունը 6.2 մագնիտուդ էր՝ ըստ Ռիխտերի սանդղակի, Միյագի նահանգում էր՝ Տոկիոյից 300 կմ հյուսիս:

2003 թվական

Սեպտեմբերի 23-ին ուժեղ երկրաշարժ տեղի ունեցավ ճապոնական Հոկայդո կղզու շրջանում, որի ուժգնությունը 8 մագնիտուդ էր՝ ըստ Ռիխտերի սանդղակի: Տուժեց ավելի քան 770 մարդ, երեքը՝ զոհվեց:

2004 թվական

Հոկտեմբերի 23-ին երկրաշարժերի շարքի հետեւանքով, որոնցից ամենաուժեղը 6.8 մագնիտուդ էր, Նիիգատայում զոհվեց 40, վնասվածքներ ստացավ ավելի քան 3.5 հազար մարդ: Մասամբ կամ հիմնովին ավերվեց ավելի քան 10 հազար շենք:

2005 թվական

Մարտի 20-ին, ըստ Ռիխտերի սանդղակի՝ 7 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ տեղի ունեցավ Ֆուկուոկա, Սագա եւ Նագասակի նահանգներում: Զոհվեց մեկ մարդ, մոտ 500-ը՝ վնասվածքներ ստացավ, վնասվեց 200 շենք: Ամենաշատը տուժեց Գենկաի կղզին, որտեղից ուղղաթիռներով տարահանվեց գրեթե ամբողջ բնակչությունը՝ մոտ 700 մարդ:

2005 թվական

Օգոստոսի 16-ին ուժեղ երկրաշարժ տեղի ունեցավ Ճապոնիայի հյուսիս-արեւելքում: Ստորգետնյա ցնցումների ուժգնությունն էպիկենտրոնում, որը գտնվում էր Խաղաղ օվկիանոսում, գերազանցեց 7 մագնիտուդը՝ ըստ Ռիխտերի սանդղակի: Տարերքից տուժեցին տասնյակ մարդիկ:

մասնագետի անկյուն

Արտադրական վտանգավոր օբյեկտների անվտանգությունը

ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը տեղեկացնում է

Անցյալ շաբաթ մենք պատմել էինք դժբախտ պատահարի մասին, որին զոհ էր գնացել տասնյոթամյա մի պատանի: Միայն փրկարարների օգնությամբ հնարավոր եղավ նրա դին հանել կռունկի վայր ընկած սլաքի տակից:

Հետամուտ լինելով պատահարի հանգամանքներին՝ ձեզ ենք ներկայացնում Արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի» մասնագետների կողմից կատարված տեխնիկական քննության արդյունքները:

«Հիդրոէներգաշին» ՓԲԸ-ի կողմից իրականացվող շինարարական աշխատանքների ժամանակ տեղի ունեցած մահացու ելքով դժբախտ դեպքի տեխնիկական քննությամբ պարզվեց, որ 2010 թ. փետրվարի 23-ին ժամը 16:00-ի սահմաններում ք.Երեւան, Լենինգրադյան փ.23/11 հասցեում «Հիդրոէներգաշին» ՓԲԸ-ի կողմից իրականացվող շինարարական աշխատանքների համար գաջ տեղափոխող հողի մեջ մխրճված մեքենան փորձել են տեղաշարժել ԴԵԿ 251 տիպի թրթուրավոր կռունկի օգնությամբ, որի ընթացքում կռունկի սլաքը թեքվել է եւ ցած ընկել՝ մահացու վիրավորելով երիտասարդին:

Դժբախտ դեպքի հանգամանքների տեխնիկական քննության արդյունքներից պարզ է դարձել, որ կռունկավարն իրավունք չուներ առանց աշղեկի հանձնարարականի նման բեռ բարձրացնելու, եւ նրա այդ քայլին՝ կռունկի վտանգավոր շահագործմանը, նպաստել է «Հիդրոէներգաշին» ՓԲ ընկերության ղեկավարության անփութությունը:

Եվ ամենակարեւորը՝ «Հիդրոէներգաշին» ՓԲԸ-ին պատկանող ԴԵԿ 251 տիպի թրթուրավոր կռունկը շահագործվել է առանց տեխնիկական անվտանգության փորձաքննության՝ խախտելով ՀՀ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի պահանջները:

Արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական անվտանության ազգային կենտրոնը մեկ անգամ եւս տնտեսվարող սուբյեկտների եւ անհատ ձեռներեցների ուշադրությունն է հրավիրում «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին« ՀՀ օրենքի պահանջների վրա, որով կանոնակարգվում է հանրապետությունում տեխնիկական անվտանգության ապահովումը:

Օրենքով սահմանվում են արտադրական վտանգավոր օբյեկտները (ԱՎՕ) եւ դրանց շահագործողների պարտականությունները, տեխանվտանգության համակարգի օղակները եւ այլն:

ԱՎՕ-ների շարքում են. վերելակները, ամբարձիչ սարքավորումները, շարժասանդուղքները, ճնշման տակ աշխատող սարքավորումները, կաթսայատները, բենզալցակայանները, վառելիքի տարողությունները, գազի լցավորման կայանները, հանքերը, քիմիական օբյեկտները, ճոպանուղիները, լողամիջոցները, կարուսելները, ինչպես նաեւ Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված այլ օբյեկտներ:

Օրենքի համաձայն, ԱՎՕ շահագործող անձինք պարտավոր են՝

- ներկայացնել իրենց ԱՎՕ-ները գրանցման ռեեստրում
- տարին մեկ անգամ ապահովել իրենց ԱՎՕ-ների փորձաքննությունը
- նշանակել իրենց ԱՎՕ-ների պատասխանատու անձանց

Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը հանդիսանում է պետական կազմակերպություն, որը մի շարք այլ գործառույթների հետ միասին իրականացնում է ԱՎՕ-ների գրանցումը ռեեստրում (գրանցումը կատարվում է անվճար), ԱՎՕ-ների փորձաքննություն, զննում, դիագնոստիկա, եզրակացության տրամադրում, ԱՎՕ-ների անվտանգ շահագործման պատասխանատու անձանց ուսուցում եւ որակավորում:

Ուշադրություն

ԱՎՕ-ները ռեեստրում չգրանցելը եւ փորձաքննության չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ 1.000.000 դրամ՝ յուրաքանչյուր ԱՎՕ-ի համար:

ՀՀ ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն
հեռ.՝ **56 40 57** կամ **56 14 12**
եւ **56 74 81 - 122**
հասցե՝ Երեւան, Սարմենի 1
www.taak.am

փրկարարի ԱՇԱՏ

Գարնանամուտ եւ քաղպաշտպանություն

<<< 1

- Փորձը ցույց տվեց, որ աշակերտները բավական դաստրասված են եւ կարողանում են արագ արձագանքել արտակարգ իրավիճակներին, - ասում է մայրաքաղաքի թիվ 56 դպրոցի տնօրեն Մարիամ Հովհաննիսյանը: *- Այսօրվա նախատեսել ենք նաեւ աշակերտներին սովորեցնել, թե ինչպես պետք է տուժածն ինքն իրեն ցուցաբերի առաջին օգնությունը,* - ասում է նա:

Մայրաքաղաքի Ռուբեն Միրոյանի անվան թիվ 77 դպրոցում սցենարը մի փոքր այլ էր: Դպրոցի տնօրեն Մելանյա Ծատինյանը սեյսմիկ կայանից ստանում է պայմանական երկրաշարժի ահազանգ: Սցենարի համաձայն, երկրաշարժի ժամանակ տեղի են ունեցել նաեւ քիմիական եւ ռադիոակտիվ արտանետումներ: Աշակերտներին բաժանվում են դիմակներ, հետո իրականացվում է դպրոցի 740 աշակերտների եւ ուսուցիչների տարհանում: Հաջորդ քայլը քաղպաշտպանության շտաբի ստեղծումն է: Շտաբի ղեկավարն է դպրոցի տնօրենը եւ պատրաստ է իրականացնել թաղային համայնքի ղեկավարի հետագա հրահանգները:

Այսօրինակ սցենարներով մայրաքաղաքի ուսումնական հաստատություններում մեկ անգամ եւս ստուգվեց դպրոցահասակների եւ ԲՈՒՀ-երի ուսանողների պատրաստվածության աստիճանը: Եթե աշակերտներն ու ուսանողները ուշի-ուշով հետեւում եւ կատարում էին հրահանգները, ապա բժիշկները, որոնց ձեռքերում է տուժածների կյանքը, քաղպաշտպանության միջազգային օրվա առիթով մեկ անգամ եւս կացադրական ուսումնական վարժանքներ, «Տարհանում, հրդեհաշիջում եւ առաջին օգնության ցուցաբերում» թեմայով: Այստեղ էլ տագնապից հետո դպրոցականները լքեցին տարածքը, հեռողացան կտրվել իրենց առօրյա հոգսերից ու վերանայել առկա ռեսուրսներն ու առավել արդյունավետ գործելու հնարավորությունները:

ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայությունը Հայաստանի մարզերում նույնպես կազմակերպել էր ուսումնավարժական մարզանքներ, սեմինարներ ու միջոցառումներ: Շիրակի մարզում, օրինակ՝ մարզի փրկարարներն իրենց փորձը փոխանցում էին դպրոցականներին: Օգնում, սովորեցնում էին նրանց, թե ինչպես է ալպինիստական գույքի օգնությամբ կազմակերպվում տարհանումը: Գյումրի քաղաքի թիվ 30 դպրոցում անցկացվեցին ցուցադրական կրակոցներ եւ դրանց հետեւանքներ: Դպրոցականներն ստիպված էին պարզվեց, որ դպրոցի շենքում երեխաներ են մնացել ու նրանց պետք է փրկել: Դպրոցականներ Գաբրյան Օնիկը եւ Խաչատրյան Արկադին տարհանվեցին պատուհանից, իսկ 11-րդ դասարանցի Խաչատրյան Սուրենը, չնայած պատուհանից իջնել չի փորձել, բայց արդեն որոշել է փրկարար դառնալ:

- Շատ կարեւոր աշխատանք է փրկարարի աշխատանքը, շատ եմ ուզում փրկարար դառնալ ու օգնել մարդկանց, - ասում է նա:

Օրը հարուստ էր միջոցառումներով նաեւ Տավուշի մարզում: Իջեւանի թիվ 4 միջնակարգ դպրոցում կազմակերպված միջոցառման սցենարի համաձայն, երկրաշարժից տուժել էր դպրոցը եւ միաժամանակ հրդեհ էր բռնկվել: Մինչեւ փրկարարների ժամանումը կատարվում է աշակերտների տարհանում, սակայն այստեղ եւս կային տուժածներ եւ նրանց պետք էր փրկել:

Իսկ Ստեփանակերտի եւ ԼՂՀ շրջանների հանրակրթական դպրոցներում Քաղպաշտպանության միջազգային կազմակերպության համաշխարհային օրն սկսվեց քաղպաշտպանությանը նվիրված բաց դասի անցկացումով, որը կազմակերպվել էր ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության եւ ԼՂՀ ԿԱ Փրկարար ծառայության համագործակցության շրջանակներում: Փրկարար ծառայության բնակչության եւ տարածքների պաշտպանության վարչության սպաները դպրոցականներին ներկայացրեցին ՔՊ համակարգի, նրա նշանակության խնդիրների եւ գործառույթների վերաբերյալ ընդգրկուն տեղեկատվություն, գործնական պարապմունքներ անցկացրեցին ՔՊ միջոցառումների վերաբերյալ:

Օրվա հիմնական միջոցառումը կազմակերպվեց Ստեփանակերտի համար 8 ավագ դպրոցում, որտեղ անցկացվեց ՔՊ հատուկ փրկարարական ուսումնավարժանք «Հրդեհի բռնկում եւ հետեւանքների վերացում» թեմայով:

Ուսումնավարժության ավարտից հետո քննարկվեց միջոցառման ընթացքը, տեղ գտած թերությունները, համապատասխան հանձնարարականներ տրվեցին դրանց հետագա վերացման ուղղությամբ:

Լոռու մարզի բժշկական հաստատություններում մարտի 1-ին Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության օրվա կապակցությամբ մարզային փրկարարական վարչության սպայական կազմի կողմից անց են կացվել պարապմունքներ, հրահանգավորումներ եւ ցուցաբերվել մեթոդական օգնություններ, որտեղ բացատրվել են տարահանման նպատակը, տեսակները, իրականացման ձեւերը, տարբեր արտակարգ իրավիճակների ժամանակ պաշտպանության վարքականոնները եւ այլն:

«Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա ՊՓԲԸ-ում վարժանքին մասնակցեցին 15 այցելուներ եւ 32 բուժաշխատողներ:

Վարժանքից հետո մարզային փրկարարական վարչության փրկարարական ջոկատի կողմից իրականացվեցին նաեւ ցուցադրական գործնական փրկարարական աշխատանքներ:

Ուսումնական վարժանքի նպատակն էր ստուգել եւ կատարելագործել բժշկական հաստատության ՔՊ ղեկավար կազմի պատրաստականությունը երկրաշարժի ժամանակ մասնակիցներին տարհանելու, փրկարարական աշխատանքները կազմակերպելու, տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերելու դեպքում: Վարժանքն անցկացվեց բարձր մակարդակով եւ առանց պատահարների: Վարժանքի ընթացքում տեղ գտած աննշան թերությունները վերացվեցին տեղում, լրացուցիչ կրկնության միջոցով:

Այս մեկ օրվա միջոցառումների մասնակիցներն այնքան գործնական գիտելիքներ ստացան, որ մինչեւ հաջորդ մարտի 1-ն իրենց կբավարարի, քանի որ Քաղպաշտպանության միջազգային օրվա առթիվ կազմակերպված միջոցառումները մեկ անգամ եւս հնարավորություն տվեցին փոքրերին, մեծերին, մասնագետներին ու ոչ մասնագետներին՝ հիշել, վերհիշել կամ՝ պարզապես սովորել, թե ինչ պետք է անել աղետների ժամանակ:

Մարդը գժություն չի անի

Հայաստանում հաջողությամբ իրականացվեց «Տաք ձմեռ» պետական մարդասիրական ծրագիրը»: Աշխարհի ապագայով մտահոգ գիտնականները կանխատեսումներ են անում կլիմայի փոփոխությունների եւ երկրագնդին սպառնացող վտանգների մասին, իսկ մեր ուշադրության կենտրոնում օդերեւութաբանների եղանակային կանխատեսումներն են: Եվրոպական մի շարք երկրներում ձմեռն իսկական անակնկալ մատուցեց եվրոպացիներին՝ հատկապես նրանց, ովքեր ձյունը միայն հեռուստացույցով էին տեսել: Մեզ համար էլ ձմեռն անակնկալ էր պատրաստել: Բայց այս անգամ մենք էինք ձյունը հեռուստացույցով նայում: Ինչեւէ, 2010-ի հայկական ձմեռը հայաստանցիներիս համար սպասվածից ավելի մեղմ էր ու տանելի:

- Գլոբալ մասշտաբով երկիր մոլորակի վրա ջերմաստիճանը բարձրացել է 0,7 աստիճանով, բայց դա այնման էլ կարեւոր չէ, քանի որ մարդը դա չի զգում: Սակայն կարեւոր է այն, որ մոլորակի ջերմաստիճանի բարձրացման հետեւանքով խախտվել են օվկիանոս - ցամաք շրջանառության փուլերը: Դրա հետեւանքով ավելացել են արտակարգ կլիմայական երեւույթների հաճախականությունը եւ ուժգնությունը: Դա է պատճառը, որ այսօր, իհարկե, եղանակային կանխատեսումներ արվում են, բայց թե որ վայրում, երբ եւ ինչ կլինի՝ դժվար է իմանալ: Ոչ մի կանխատեսման կենտրոն իր վրա չի վերցնի այդ աստիճանի ճշգրիտ կանխատեսման պատասխանատվությունը, - ասում է ՄԱԶԾ-ի էներգախնայողության եւ կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող Դիանա Հարությունյանը:

Հայաստանում ձմեռն անսովոր որակվեց: Սպասվածից ավելի տաք էր, կամ, ինչպես ժողովուրդն է ասում, աղքատի ձմեռ էր:

- Նման ձմեռներ դիտվում են Հայաստանում,- ասում է Հայպետհիդրոմետի օպերատիվ հիդրոօդերեւութաբանության կենտրոնի պետ Զարուհի Պետրոսյանը, - *այսպիսի ձմեռ մենք տեսել ենք 1963 եւ 1966 թվականներին: Դեկտեմբեր, հունվար ու, հատկապես, փետրվար ամիսներին ջերմաստիճանը հիմնականում բարձր է եղել նորմայից, իսկ փետրվարի երկրորդ տասնօրյակում մենք ունեինք այնպիսի եղանակային պայմաններ, որոնք բնութագրական են մարս ամսի համար:*

Արդեն սկսվել է օրացուցային գարունն ու, հետաքրքիր է, արդյո՞ք այն կհամընկնի եղանակային գարնան հետ: Մեր հիդրոօդերեւութաբանական ծառայությունը երկարաժամկետ կանխատեսումներ է անում տարին երկու անգամ՝ այսպես կոչվող ցուրտ եւ տաք սեզոնների համար: Ցուրտ սեզոնի կանխատեսումն արվում է հոկտեմբեր ամսին, իսկ տաք սեզոնինը՝ մարտին: Այսինքն, այս պահին գարնան երեք ամիսների կանխատեսումը դեռեւս իրականացված չէ, ուստի դեռ վաղ է խոսել գարնանային անակնկալների մասին: Բացի դրանից, մեր երկրի տարբեր վայրերում գարունը տարբեր ամիսներ է գալիս: Եթե Երեւանում այն սկսվում է փետրվարի վերջին օրերից, ապա բարձր լեռնային շրջաններում՝ ապրիլի երրորդ տասնօրյակից:

- Իհարկե, դա չի վերաբերում այս տարվան, քանի որ, կարելի է ասել, 2010-ի ձմռանը հանրապետության ողջ տարածքում հիմնականում ունեցել ենք գարնանային ռեժիմ, այսինքն՝ միջին օրական ջերմաստիճանը հովտային շրջաններում 0-ից բարձր է եղել, - ասում է Զարուհի Պետրոսյանը:

Հայաստանում օդի ջերմաստիճանի՝ զրոյից իջնելու հավանականությունն այս պահին զրո է, եթե, իհարկե, արտասովոր եղանակային ռեժիմները նոր անակնկալներ չմատուցեն: Եղանակային կարճաժամկետ կանխատեսումներ մարտի համար արդեն կան:

- Մենք պատասխան ենք, որ մարս ամիսը կլինի նորմայի սահմաններում: Դա նշանակում է, որ երեւանցիները պետք է ակնկալեն մոտավորապես այնպիսի եղանակային պայմաններ, ինչպիսիք եղել են փետրվար ամսին՝ փոքր-ինչ բարձր, - ներկայացնում է հիդրոօդերեւութաբանության կենտրոնի պետը:

Բացի դրանից, մարտ ամսից արեգակը գնալով սկսում է ակտիվանալ ու, հետեւաբար, օդի ջերմաստիճանը սկսում է բարձրանալ: Այսպես եղել է միշտ, սակայն վերջին տարիներին եղանակը սկսել է անակնկալներ մատուցել, եւ եղել են դեպքեր, երբ օդի ջերմաստիճանը կտրուկ իջել է մեկ-երկու օրով՝ վնասելով ծառերի բողբոջները: Մասնագետների կարծիքով, այսօր արդեն, անցյալ դարի եղանակի փոփոխության վերլուծության արդյունքում ձեւավորված միջինացված տվյալները փոխվել են, եւ, կլիմայի գլոբալ տաքացման երեւույթի պատճառով, պատմականորեն ձեւավորված տվյալներն այնքան էլ կիրառելի չեն: Դա ավելի կանխատեսելի էր առաջ, երբ մարդու ազդեցությունը եղանակի ձեւավորման վրա շատ ավելի քիչ էր, քան՝ այսօր:

- Եղանակի ճշգրիտ կանխատեսման հնարավորությունն այսօր կախված է ոչ այնքան ֆինանսական հնարավորություններից, այլ բուն ֆիզիկական երեւույթից,- ասում է ՄԱԶԾ-ի էներգախնայողության եւ կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող Դիանա Հարությունյանը, - *ինչն այսօր բավական անորոշ է: Սակայն հասակ է մի բան. կլիմայի փոփոխությունը կարող է հանգեցնել տնտեսական ու մարդկային կորուստների, ուստի երկրները պետք է ավելի պատրաստ լինեն դիմակայելու արտակարգ իրավիճակներին եւ կառավարեն դրանք: Դա կոչվում է ռիսկի կառավարում: Դա բազմագործոն համակարգ է, որի մեջ մտնում են աղահովագրական համակարգի ստեղծումը, ճիշտ կառուցապատումը, գետերի հուների մաքրումը, ափերի ամրացման աշխատանքների ժամանակին իրականացումը եւ այլն: Դրանց կարեւորությունն այսօր ավելի է մեծացել, քանի որ արտակարգ եղանակային երեւույթներն ավելի ուժգնանալու են, դրա միտումը կա, եւ դա որպես ուղեցույց տրված է բոլոր երկրներին, որ իրենք, այսպես ասած, հարմարվողականության քաղաքականություն մշակեն:*

Վաղ գարնանային ցրտահարություններն ու կարկտահարումները վերջին տարիներին լուրջ վնաս են հասցրել մեր երկրի գյուղատնտեսներին, ուստի այս օրերին, հատկապես գյուղատնտեսների ուշադրության կենտրոնում, եղանակային կանխատեսումներն են: Թե ինչպիսին կլինի անսովոր ձմռանը հաջորդող գարունը, կտեղեկանանք մարտի վերջին, խոստանում են հայհիդրոօդերեւութաբանները:

Արմինե Գրիգորյան

1-01 հրշեջ ծառայություն

Աղեկալի հրդեհների պատմությունից

Անդրադառնանք պատմությանը հայտնի մի շարք հրդեհների, որոնք տեղի են ունեցել մարդկանց զանգվածային ներկայությամբ օբյեկտներում եւ պատճառ են դարձել բազմաթիվ զոհերի, խեղանդամությունների եւ խոշոր նյութական կորուստների:

Բարձր հարկայնության շենքեր

Բարձր հարկայնության շենքերի հրդեհավտանգավորությունը բնութագրվում է հրդեհի արագ տարածմամբ եւ հրդեհաշիջման բարդությամբ: Պատճառը շենքերի բարձրությունն է, հրդեհաշիջման միջոցները վերին հարկեր հասցնելու եւ ծխապատման գոտուց մարդկանց տարահանման դժվարությունները: Այդպիսի շենքերում տեղի ունեցած խոշոր հրդեհների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծխի տարածման հիմնական ուղիներն են սանդղավանդակները, վերելակների հորանները եւ հաղորդակցության (կոմունիկացիոն) այլ ուղիները: Ծխապատման աղբյուր կարող են հանդիսանալ նաեւ այրվող վերելակների խցիկները: Բարձր ջերմաստիճանի ազդեցությունից վերելակների կառավարման սարքավորումները շատ արագ շարքից դուրս են գալիս եւ վերելակների խցիկները բլոկավորվում են հորաններում: Այդ իսկ պատճառով, վերելակներն ու սովորական սանդղավանդակները չեն կարող ապահովել հրդեհի դեպքում մարդկանց անվտանգ տարահանումը: Դեռ ավելին, միջանցքների եւ վերելակասրահների հարդարման համար օգտագործվող զանազան դյուրավառ նյութերի առկայությունը նպաստում է հրդեհի արագ տարածմանը եւ մեծ չափեր ընդունելուն:

Բարձրաբերձ շենքերի հրդեհաշիջման աշխատանքների իրականացման համար պահանջվում է մեծ քանակությամբ ուժերի եւ հատուկ տեխնիկայի (ավտոսանդուղքներ, գազածխապաշտպան ծառայության ավտոմեքենաներ, բարձր ճնշման պոմպեր եւ այլն) ներգրավում: Բարեբախտաբար մեր հանրապետությունը խուսափել է համանման աղետալի հետեւանքներով հրդեհներից (չնայած բարձրաբերձ շենքերում պարբերաբար տեղի ունեցող հրդեհներին), սակայն բարձր հարկայնության շենքերի անմխիթար հակահրդեհային վիճակը լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Բնակիչների կողմից թույլ տրված ապօրինությունների հետեւանքով ծխահեռացման եւ ինժեներական հաղորդակցման հորանները, վերելակների նախասրահներն ու սանդղավանդակների հարթակները վերածվել են խորդանոցների, փակվել են տարահանման համար նախատեսված եւ առանձնակի կարեւորություն ներկայացնող միջսեկցիոն անցումները: Նման իրավիճակը զգալիորեն բարդացնում է հրդեհի ժամանակ իրականացվող հրդեհաշիջման եւ փրկարարական աշխատանքների իրականացումը եւ կարող է հանգեցնել խուճապի՝ լուրջ եւ ծանր հետեւանքներով:

Հայտնի է, որ բարձրաբերձ շենքերում հրդեհներն ուղեկցվում են այրման պրոցեսի արագ զարգացմամբ, մեծ քանակությամբ ջերմության եւ այրման արգասիքների գոյացմամբ, ինչն առաջ է բերում սանդղավանդակների, միջանցքների, սենյակների եւ այլ ծավալային կոմունիկացիաների ծխապատում: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ զոհերի գերակշիռ մասը՝ շուրջ 80%-ը, մահանում են այրման արգասիքներից թունավորվելու եւ խեղդվելու հետեւանքով: Այդ իսկ պատճառով հակահրդեհային պաշտպանության համակարգում առաջին հերթին պետք է նախատեսվի տարահանման ուղիների հակածխային պաշտպանություն: Շենքերի հակահրդեհային պաշտպանության համակարգում պետք է ներգրավվեն հրդեհի ահազանգման եւ հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերը, օդի դիմահարի եւ ծխահեռացման ավտոմատացված համակարգերը: Մեծ նշանակություն է տրվում նաեւ ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի առկայությանը, վթարային լուսավորությանը եւ տարահանման ուղիների նշմանը:

Հրդեհների ժամանակ հաճախ ի հայտ են գալիս թերություններ ու սխալներ, որոնք թույլ են տրվել շենքի նախագծման, շինարարության եւ շահագործման ընթացքում: Հակահրդեհային անվտանգության կանոնների պահանջներից նույնիսկ աննշան շեղումը կարող է բերել լուրջ հետեւանքների: Հակահրդեհային պաշտպանության բարձր աստիճանի կարելի է հասնել միայն նախագծային, կոնստրուկտիվ եւ տեխնիկական լուծումների միաժամանակյա կիրառման շնորհիվ:

Սակայն, հարկ է գիտենալ, որ ոչ մի վերահսկողություն եւ տեխնիկա ցանկալի արդյունք չի տա, եթե մարդիկ ըմբռնումով չվերաբերվեն հրդեհային անվտանգության հարցերին: Յուրաքանչյուր ոք, ով բնակվում կամ աշխատում է բարձրաբերձ շենքում, պետք է գիտենա շենքի հակահրդեհային պաշտպանության վերաբերյալ հիմնական տվյալները, հրդեհի մասին տեղեկացման եւ հրդեհաշիջման գործողությունների կարգը, տարահանման ձեւերն ու միջոցները եւ այլն: Հրդեհներին ուշացումով ահազանգելը, մարդկանց տարահանելու եւ հրդեհը սկզբնական փուլում մարելու՝ վարչակազմի եւ ծառայողների անկարողությունը, վտանգի մասին ազդարարող համակարգերի բացակայությունը, հրդեհի ահազանգման եւ հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերի բացակայությունը, որպես կանոն, բազմահարկ շենքերում հրդեհների տեղիք են տալիս՝ ուղեկցվելով ողբերգական հետեւանքներով: Հրդեհների փորձը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ մարդիկ խուճապի չեն մատնվել եւ նրանց գործողությունները եղել են ակտիվ ու գիտակցված՝ հրդեհների հետեւանքները ծանր չեն եղել, եւ ընդհակառակը: Այնպես որ, հրդեհներից եւ դրանց աղետալի հետեւանքներից խուսափելու լավագույն եւ փորձված միջոցը եղել եւ մնում է հրդեհային անվտանգության կանոնների պահանջների իմացությունն ու անշեղ կատարումը:

Շարունակելի

Սերգեյ Հայրապետյան
ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ՊՀՏ
ՀՀՎՀՔ բաժնի պետ

հոգեբանի սենյակ

Ինչու՞ են երեխաները նմանակում ծնողներին

Մեզանից յուրաքանչյուրը, եթե մի քիչ ավելի ուշադիր լինի, ապա անպայման կնկատի, որ 1,5 տարեկանից սկսած, երեխան կրկնում է այն ամենն, ինչ անում են իր ծնողները: Աղջիկները հաճույքով կրկնօրինակում են մայրիկի շարժուձեւը՝ ուտելիք պարտաստելը, երեխային խնամելու առանձնահատկությունները, տղաները նմանակում են հայրիկին, թե ինչպես է նա թերթ կարդում, ծխում, խոսում եւ այլն: Մեծահասակներին կարող է այս ամենը խաղ թվալ, իսկ ծայրահեղ դեպքում էլ՝ դուր չգալ, սակայն իրականում այդ ամենը շատ կարեւոր եւ օգտակար է երեխայի զարգացման համար:

Ծնված օրվանից փոքրիկը փորձում է ամեն կերպ հաղորդակցվել ծնողի հետ: Սկզբնական շրջանում երեխայի եւ ծնողի միջեւ շփումն իրականանում է զուտ միմիկայի միջոցով: Այնուհետեւ երեխան, աստիճանաբար լսելով ծնողի ձայնը, հիշելով նրա ձայնի ինտոնացիան, դեմքի արտահայտությանը՝ ձեռք է բերում մարդկանց հույզերը եւ զգացմունքները ճանաչելու մեծ փորձ, սովորում է հասկանալ նրանց խոսքը եւ արձագանքում է դրանց: Տարիքի հետ երեխայի հնարավորություններն ավելի են մեծանում, եւ նա սկսում է նմանակել ծնողների ավելի բարդ գործողություններ: 2-3 տարեկանում երեխան արդեն նկատելի կերպով կրկնօրինակում է շատերի ժեստերը, վարքի ձեւերը, հույզերը: Ծնողի հետ անմիջական շփման եւ նրան նմանակելու հետեւանքով երեխան ձեռք է բերում հաղորդակցման հմտություններ, որոնց հիման վրա էլ մշակում է շփման իր ձեւը՝ համապատասխան իր խառնվածքին եւ անհատականությանը:

Ուրիշներին նմանակելը երեխային բնորոշ հատկություններից մեկն է: Այստեղ շատ կարեւոր է, թե երեխան ում է նմանակում եւ ինչպես, ում է նա ընտրում որպես նմանակման օբյեկտ, այն դրա՞կա՞ն, թե՞ բացասական ազդեցություն ունի երեխայի վրա: Նմանակումը որեւէ կերպարի հետ նույնականանալու գործընթաց է: Այդ կերպարը կարող է լինել մայրիկը, հայրիկը կամ այլ անձ, ով չափազանց կարեւոր է երեխայի համար: Նա իր ընտրած կերպարին սկսում է նմանակել՝ դերային խաղեր խաղալու միջոցով: Սկզբնական շրջանում դերային խաղերի թեման պտտվում է զուտ ընտանիքի շուրջը, հետո այն աստիճանաբար ավելի ընդարձակ բնույթ է կրում: Օր.՝ մայրիկն ինչ-որ բան է պատրաստում խոհանոցում, տունն է հավաքում, մազերն է հարդարում, այս ամենը շատ է հետաքրքրում երեխային, ինչը նա ընկալում է որպես շատ զվարճալի եւ առեղծվածային մի խաղ: Երեխան կրկնում է մեծերի կողմից իրականացվող գործունեությունը, որպեսզի հասկանա այդ երեւույթների նշանակությունը եւ իմաստը: Այս միջոցով երեխան միջավայրը դարձնում է իր համար հասկանալի: Սա երեխայի զարգացման կարեւոր եւ անհրաժեշտ փուլ է, որը պահանջում է ուշադրության կենտրոնացում, որպեսզի կարողանա ֆիքսել բոլոր մանրամասնությունները: Երեխային սկսում են ավելի հետաքրքրել մայրիկի եւ հայրիկի «խաղալիքները», քան նրանք, որ իրեն են պատկանում:

Փորձեք մաքսիմալ արդյունավետ օգտագործել այդ ժամանակը: Իրական իրերի խաղալիք տարբերակները՝ հեռախոս, խոհանոցային սպասք, պլաստմասե գործիքներ եւ շատ այլ խաղալիքներ օգնում են երեխային նախապատրաստվել մեծերի կյանքին: Փորձեք հնարավորինս ամեն ինչ երեխայի հետ միասին անել: Միասին հաց կերեք, լվացվեք, հագնվեք, խաղեր խաղացեք: Մանրամասն մեկնաբանեք ձեր գործողությունները երեխային հասկանալի ձեւով. դուք նրան օգնում եք սովորել ինքնասպասարկման հմտություններ:

Աղջիկների ամենաառաջին դերային խաղը «մայր ու աղջիկ» խաղն է: Հետո խաղերն ավելի են բարդանում, ավելանում են նոր սյուժեներ, դերեր՝ բժիշկ, զինվոր, արքայադուստր եւ այլն: Այսպես երեխան սովորում է մեծահասակ լինել: Մի դերից մյուսին անցնելով՝ երեխան սովորում է կողմնորոշվել մարդկային տարբեր մասնագիտությունների եւ առարկաների միջեւ: Այսինքն, երեխան սկսում է հասկանալ, թե ինչի համար են օր.՝ ջերմաչափը, դեղերը: Բացատրեք երեխային, թե ինչի համար են այս կամ այն գործիքներն, իրերը: Խաղի ժամանակ փոխեք ձեր դերերը, որպեսզի պարզեք, թե երեխան որքանով է ճիշտ հասկացել այս կամ այն գործիքի դերը եւ նշանակությունը: Մի կարծեք, թե ժամանակն անիմաստ եք վատնում՝ այդ շփումը շատ կարեւոր է երեխայի համար, քանի որ նա ձեռք է բերում արդյունավետ ինքնուրույն փորձ, դուք ոչ միայն խաղում եք երեխայի հետ, այլ ծանոթացնում եք նրան անծանոթ իրերի հետ:

Երեխաները շատ բաներ սովորում են ուրիշներից, սակայն, ցավոք, միշտ չէ, որ սովորում են լավ բաներ: Երեխան սպունգի նման կլանում է նաեւ վատը: Նա ծեծում է տիկնիկին, հարվածում է դռանը, բղավում է արջուկի վրա եւ այլն: Այս ամենի միջոցով երեխան դուրս է բերում իր բացասական հույզերը, լարվածությունը:

Մեր երեխաները վերցնում են ծնողի սովորույթներն անկախ նրանից՝ դրանք դրական են, թե բացասական: Երեխան հակված է նաեւ նմանակել իր մեծ քույրիկին կամ եղբորը: Երբ երեխան սկսում է նմանակել ֆիլմի կամ մուլտֆիլմի հերոսին, ծնողներն առաջին հերթին պետք է մտածեն՝ արդյո՞ք այդ նմանակումը դրականորեն կանդրադառնա երեխայի վրա: Ուշադիր եղեք, թե նա ինչ հերոսներ է ընտրում նմանակելու համար: Երեխային դեռեւս դժվար է տարանջատել լավը վատից, իսկ դուք պետք է օգնեք նրան, բացատրեք, թե ինչու է այս հերոսը դրական, իսկ մյուսը՝ բացասական: Դուք պետք է ուշադիր լինեք, թե երեխան ինչ ֆիլմեր եւ մուլտֆիլմեր է նայում, ինչ հեքիաթներ եք կարդում նրա համար: Դուք կարող եք ուղղորդել ձեր երեխայի վարքն՝ օրինակներ բերելով իր սիրելի հերոսներից: Օր.՝ «Թեդի արջուկն իրեն այդպես չի պահում, ես կարծում եմ նա իրեն այսպես կպահեր»: Այս ամենը բավական է, որ երեխան շարժվի արջուկի օրինակով:

Լինում են դեպքեր, երբ երեխան վատ վարվելաձեւ է յուրացնում մանկապարտեզում կամ մանկական խաղահրապարակում: Երբեմն ծնողները բարկանում են երեխայի վրա ու պատժում, սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ մոտեցումն ավելի շատ ամրապնդում է երեխայի վատ վարքը, քան նպաստում դրա չկրկնվելուն: Թե ո՞ր միջոցն առավել արդյունավետ կլինի, որ երեխան չկրկնի վատ արարքը՝ վիճելի հարց է: Առավել արդյունավետ կլինի, երբ դուք երեխայի ուշադրությունը սեւեռեք իր դրական պահվածքի վրա, խրախուսեք նրա լավ արարքները, որն էլ կնպաստի դրանց հաճախակի կրկնվելուն:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Ձեր հարցերը հոգեբանին կարող եք ուղարկել hogeban@emergency.am էլ. հասցեով:

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը հայտարարում է մրցույթ՝ ծառայության աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) քաղաքացիական ծառայության հետեւյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

1. Պետական հրդեհային տեսչության Սյունիքի մարզային հրդեհային տեսչության տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34/1-4.2-39)

2. Պետական հրդեհային տեսչության Տավուշի մարզային հրդեհային տեսչության տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34/1-4.2-44)

Մասնակցում է Բաժնի առջեւ դրված գործառույթներից բխող խնդիրների վերլուծությանը եւ գնահատմանը: Իրականացնում է հրդեհատեխնիկական հետազոտություններ, հաշվառում է սպասարկման տարածքում գտնվող օբյեկտների հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը եւ դրանց տեխնիկական վիճակի վերաբերյալ զեկուցումներ է նախապատրաստում: Իր լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

1-2 կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթը կկայանա 21.04.2010 թ. ժամը 14:15-ին, Հայաստանի փրկարար ծառայության շենքում (ք. Երեւան Պուշկինի 25):

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն,
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- 1-2 կետերում նշված պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
- համակարգչի եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաեւ այլ անհրաժեշտ ծրագրային միջոցների տիրապետում,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

3. Պետական հրդեհային տեսչության եղարքունիքի մարզային հրդեհային տեսչության հրդեհների հաշվառման, վերլուծության եւ հակահրդեհային քարոզչության բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ-տեսուչի (ծածկագիր՝ 34/1-3.3-18)

Իրականացնում է հրդեհների հաշվառման, վերլուծության աշխատանքներ եւ հակահրդեհային քարոզչություն: Կատարում է ներկայացվող հաշվետվությունների վերլուծություն: Զբաղվում է հրդեհների հաշվառման, վերլուծության աշխատանքներով եւ հակահրդեհային քարոզչության ոլորտներին վերաբերող իրավական ակտերի մշակմամբ եւ լրամշակմամբ: Մասնակցում է սեմինարների եւ հանդես է գալիս զեկուցումներով:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթը կկայանա 23.04.2010 թ.՝ ժամը 14:15-ին, Հայաստանի փրկարար ծառայության շենքում (ք. Երեւան Պուշկինի 25):

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն
- քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- Նշված պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնների անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

* * *

Դիմող ՀՀ քաղաքացիները Աշխատակազմ (ք. Երեւան, Պուշկինի 25) պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-12:30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 19.03.2010 թ.:

Մրցույթներին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրերին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն (ք. Երեւան, Պուշկինի 25, հեռ. 53 - 07 - 87):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթներին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:

արտակարգ ժամանց

Հանցագործ անփությու՞ն, թե՞ անփույթ հանցագործություն

Ռուսական լրատվական կայքերից մեկը հրապարակել է հանցագործների մի ցուցակ, որոնք դարձել են սեփական հիմարության եւ անփութության զոհը: Ներկայացնում ենք այդ հիթ-շքերթի «առաջատարներին»:

Վճռականությունը տարիք չի հարցնում

Գերմանիայում, հեծանվով զբոսանքի ժամանակ, գողը թռցնում է մի տարեց կնոջ պայուսակը: Թոշակառու տատիկը ոչ միայն սկսում է իր հեծանվով հետապնդել գողին, այլեւ օգնության է կանչում կողքից ընթացող ավտոմեքենայի վարորդին: Վերջինս օգնում է բռնել հանցագործին ու վերադարձնել պայուսակը:

Հերթական զոհին ընտրելով՝ գողը վստահ էր, որ 80-ամյա տատիկը որեւէ դիմադրություն ցույց չի տալու եւ խիստ թերագնահատել էր նրա վճռականությունն ու, տարիքի համեմատ, գերազանց ֆիզիկական վիճակը:

Զինված են ու վտանգավոր

Ֆրանսիայում մի ավազակախումբ հարձակման թիրախ է ընտրում Փարիզի Լատինական թաղամասում գործող ճապոնական ռեստորանը: Գողերը հաշվի չէին առել, որ ցանկացած ճապոնական խոհանոցի դարակներում՝ ծովամթերքի մշակման համար նախատեսված, տարբեր ձեւի ու չափի դանակների շատ լայն տեսականի կա: Անհրաժեշտության եւ հմուտ օգտագործման դեպքում դրանք կարող են վերածվել շատ վտանգավոր սառը զենքի:

Սուր խոհանոցային դանակներով զինված խոհարարներն ու մատուցողներն ուժեղ դիմադրություն են ցույց տալիս գողերին, որոնք, իհարկե, դրան պատրաստ չէին: Գողերից մեկն ստացած ծանր

վնասվածքներից հիվանդանոցում մահանում է, իսկ մյուսը, որ նույնպես վիրավոր էր, չի կարողանում փախչել, եւ ոստիկանները ձերբակալում են նրան ռեստորանից ոչ հեռու:

Նորագույն տեխնոլոգիաներ

Հոլանդիայի Գրոնինգեն քաղաքում դեռահասի վրա հարձակված հանցագործներն ուշադրություն չեն դարձնում փողոցում՝ անմիջապես իրենց կողքին կայանված փոքրիկ բեռնատար մեքենայի վրա: Նրանց մտքով անգամ չէր կարող անցնել, որ տանիքին հսկա ալեհավաքներ ունեցող ավտոմեքենան հայտնի «Գուգլ» կայքի քարտեզների համար քաղաքի փողոցներն է նկարահանում:

Վիրավորված դեռահասը, բարեբախտաբար, գիտեր այդ մասին: Հասնելով տուն՝ նա միացնում է համակարգիչը, ինտերնետի միջոցով գտնում իրեն նեղացնողների լուսանկարները եւ դրանք հանձնում ոստիկաններին: Վերջիններս, իրենց հերթին, դիմում են կայքի գրասենյակ՝ խնդրելով աջակցել հանցագործության բացահայտմանը: Գրասենյակից նրանց են տրամադրում հանցագործների առավել որակով լուսանկարներ, որոնց շնորհիվ էլ ոստիկանները նրանց արագ գտնում են ու ձերբակալում:

Փոխանցիր ընկերոջդ

Ինտերնետային հայտնի սոցիալական կայքերը մեկ անգամ չէ, որ օգնել են ոստիկաններին՝ գտնել հետախուզման մեջ գտնվող հանցագործներին: Այս անգամ իրավապահներին նման ծառայություն է մատուցել «Ֆեյսբուքը»:

Նոր Զելանդիայի Քուինսթաուն քաղաքի բարերից մեկի չհրկիզվող պահարանը թալանած երիտասարդը չափազանց ուշ է գլխի ընկնում, որ տարածքը վերահսկվում է փոքրիկ տեսախցիկներով: Նա մի քանի վայրկյանով հանում է անթափանց դիմակը, որպեսզի քրտինքը սրբի եւ, դատելով նրա՝ ժապավենի վրա դրոշմված դեմքի արտահայտությունից, հենց այդ պահին էլ նկատում է իր կողմն ուղղված փոքրիկ տեսախցիկը: Երիտասարդն այլայլվում է, գլխին քաշում դիմակն ու փախչում: Մի քանի վայրկյանը բավարար է լինում, որպեսզի տեսախցիկը ֆիքսի նրա դեմքը:

Ոստիկաններն այդ փոքրիկ տեսանյութը տեղադրում են ինտերնետում: Հոլովակն այնքան է դուր գալիս ինտերնետից օգտվողներին, որ նրանք սկսում են զվարճանալու համար հղումներ անել ու արագ իրար փոխանցել այն:

Գողին գտնելու համար երկար ժամանակ չի պահանջվում, քանի որ քաղաքի բնակչությունն ընդամենը երեսուն հազար է:

Կարճ ժամանակ անց ոստիկանները գողին հայտնաբերում են ու ձերբակալում:

Սխալ ընտրություն

ԱՄՆ-ի Վիսքոնսին նահանգում մի գող որոշում է ստուգել տեղի… թաեքվանդոյի դպրոցի դրամարկղը: Ինչպես եւ կանխատեսելի էր՝ ուշ երեկոյան դպրոց ներխուժելով, գողը բախվում է արեւելյան մարտարվեստի վարպետին, որն այդ ժամին անհատական պարապմունք էր անցկացնում իր տաղանդավոր սաներից մեկի հետ… Նրանք իրենց հերթին որոշում են օգտվել ընձեռված հնարավորությունից ու սովորած հնարքները կիրառել դպրոց ներխուժած հանցագործի վրա:

Այս անգամ վայ-կողոպտիչը

գլուխը պրծացնում է միայն կապտուկներով: Նրան հանձնում են ոստիկանությանը, իսկ պատահարը լավ գովազդ է ծառայում մարտարվեստի դպրոցի համար:

Տաքսի, տաքսի...

Մեծ Բրիտանիայում երկու բնակարանային գող նախօրոք նեղություն չեն քաշում հոգալ իրենց տրանսպորտի մասին, եւ գողությունից անմիջապես հետո դուրս գալով փողոց՝ նստում են առաջին պատահած տաքսին: Պարզվում է, որ տաքսու վարորդը մի կին է, որն ինքն էլ էր վերջերս գողության զոհ դարձել: Նրան տարօրինակ է թվում իր ուղեւորների վարքագիծը: Գողերը, չհամբերելով, սկսում են մեքենայի հետեւի նստատեղին շրջել տարբեր պայուսակներում հավաքած կանացի իրերն ու դրանք բաժանել իրար մեջ: Իսկ երբ կին վարորդը հարցնում է, թե որտեղից են նրանք ձեռք բերել այդ ապրանքը, տղամարդիկ սկսում են քրքջալ:

Տաքսու վարորդը նրանց հասցնում է նշված հասցեով, իսկ հետո այդ նույն հասցեով կանչում ոստիկաններին: Կանացի բնազդը նրան չի խաբում: Դրանք իսկապես գողեր էին, որոնք արդեն երկար ժամանակ գտնվում էին հետախուզության մեջ:

Պարա-հանդեսա-յին պար / ... Բակունց	⇨	⇩		⇩		Լատվիա-կան միկ-րոավտո-բուս	⇩	Ռուսական գյուղակ / Չբացված ծաղիկ	⇩	Վրացա-կան խավ / Թռչուն	⇩
⇩	Թռչնի «բնակա-րան» / Հյուպատոս		Հարավա-յին Կորեա / Ռուս մեծ գիտնական		Պեպոյի ընկերը / Երկրի արբանյակ	⇨		⇩		⇩	
⇨			⇩		⇩	Տարրական մասնիկ / Հանաք	⇨				
	Գունատ, դեղնած / Գազանի բերան	⇨				⇩	Թենիսի դաշտ / Կարպետը՝ հատակին	⇨			
⇨				Մետաղյա աման՝ հեղուկի համար	⇨		⇩			Ֆուտբո-լիստ՝ Զինեդին ...	
	Սպայական կոչում / Գեղեցիկ միջատ	⇨							Քաղաք Ռուսաստանում՝ Նիժնի ...	⇩	Պարզ-վճիտ
Ռուս դերասան՝ Ռոլան ...	⇩	Երկրաչա-փական մարմին		Պայտ / Բացիլ	⇨			Շան ոջիլ / Մեր գեղե-ցիկ կեսը	⇨ ⇩		⇩
⇨		⇩		⇩	Թութակի տեսակ	⇨		⇩			
Գրավիչ, դյութիչ / Հարուստ, բարեկարգ	⇨					Դերասան՝ Սթիվեն ... / Լեռներ՝ Տյան ...	⇨				
⇨			Բեթհովեն՝ «Լուսնի ...»		Փշոտ բույս	⇩	Կովկասի գերուհին / Հաղորդակ-ցություն	⇨			
Ընկույզ, պնդուկ, չամիչ		Կարմիր գույնի քար / Դժոխք, տարտարոս	⇨ ⇩		⇩		⇩	Հին շումե-րական պետու-թյուն		Քիչ բաց, նամ	
⇩	Զորանալ / Դերասան՝ ... Դելոն	⇨ ⇩						⇩	Կիսատ, անավարտ	⇩	Հին իսլան-դական արձակ ասք
⇨				Մորթուց պարկ՝ հե-ղուկների համար		Ներշն-չանք, խանդա-վառություն	⇨		⇩		⇩
	Առաստա-ղի հակա-ռակ կողմում	⇨		⇩			Մուլտֆիլ-մային կո-կորդիլոս	⇨			
⇨						Անասնա-կերի պա-հեստ	⇨				
	Բարի լուր		Թռչուն	⇨			Հնդկական գլխավոր աստված	⇨			

§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »õ Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ· ³ÉÇù¦
Éñ³ïí³Ï³Ý Ï»ÝïñáÝ ê ä À
îÝûñ»Ý`
ÜáõÝ» ¶ñÇ·áñÛ³Ý
¶ÉË³íáñ ËÙµ³·Çñ`
ÜÇÏáÉ³Û ¶ñÇ·áñÛ³Ý
ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É`
²í³· ºÕ÷ñ»ÙÛ³Ý
Ò»õ³íáñáÕ`
Ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÛ³Ý
ºñ»õ³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 56 76 56, 24 24 22
E - mail: tert@emergency.am
îå³·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏãáõÃÛ³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝÛ³ó 2
Ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ïí»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³Û³Ï³Ý` 1074,
ïå³Ý³ÏÁ` 5000 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության
4.3.2010 թ.